ՈՐՈՇՈՒՄ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՄԻՆ

«25» սեպտեմբերի 2019թ. N 1/-36/51

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության աշխատակիցներ Բ. Արզումանյանի և Հ. Սիմոնյանի կողմից 30.07.2019 թվականին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ 03.09.2019 թվականին կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 003274, թիվ 003276 և թիվ 003275 արձանագրությունները արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություններ):

Համաձայն թիվ 003274 արձանագրության՝ «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանի կողմից Մարկավագի փողոցի հ. 117 թիվ 190 խանութ հասցեում գտնվող առևտրի օբյեկտում իրականացվել է պիտանելիության ժամկետն անցած ապրանքների՝ «Kinder» քաղցրավենիքների, «Campina» յոգուրտների, «Աթենք» «Բիէլլա», «Բարի Սամարացի» երշիկների, «Nutella» արտադրանքի իրացում:

Համաձայն թիվ 003276 արձանագրության՝ «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանի կողմից Մարկավագի փողոցի հ. 117 թիվ 190 խանութ հասցեում գտնվող առևտրի օբյեկտում չի ապահովվել օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով:

Համաձայն թիվ 003275 արձանագրության՝ «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանի կողմից Մարկավագի փողոցի հ. 117 թիվ 190 խանութ հասցեում՝ սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտում, աշխատողին չի ապահովվել աշխատանքային արտահագուստի կրումը:

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել և տեսանկարահանվել են պիտանիության ժամկետն անցած ապրանքները և իրավախատման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

«Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցման համար՝ 264.110.889227, ՀՎՀՀ՝ 00898038) տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանը ծանուցված լինելով 25.09.2019 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին արձանագրությունները, հ. 95 հանձնարարագիրը, ընկերության պետական գրանցման վերաբերյալ քաղվածքը, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի 17.09.2019 թվականի հ. 31/01-1/829 գրությունը, իրավախախտման լուսանկարները և տեսասկավառակը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանի կողմից Մարկավագի փողոցի հ. 117 թիվ 190 խանութ հասցեում գտնվող առևտրի օբյեկտում իրականացվել է պիտանելիության ժամկետն անցած ապրանքների՝ «Kinder» քաղցրավենիքների, «Campina» յոգուրտների, «Աթենք» «Բիէլլա», «Բարի Սամարացի» երշիկների, «Nutella» արտադրանքի իրացում: Պիտանիության ժամկետն անցած ապրանքները գտնվել են առևտրի սրահում, գնորդի համար տեսանելի և հասանելի վայրում: Առևտրի օբյեկտում չի ապահովվել օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով և աշխատողին չի ապահովվել աշխատանքային արտահագուստի կրումը: «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանը թույլ է տվել Օրենսգրքի 158–րդ հոդվածի 1–ին, 4-րդ, և 10-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումներ:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող

հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 158–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Օրենսգրքի 158–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի, կազմակերպչի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

Օրենսգրքի 158–րդ հոդվածի 10–րդ մասի համաձայն՝ վաճառողի կողմից սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Օրենսգրքի 35–րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում: Այդ դեպքում հիմնական տույժին կարող է միացվել կատարված իրավախախտումներից ցանկացածի համար պատասխանատվության վերաբերյալ հոդվածներով նախատեսված լրացուցիչ տույժերից մեկը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 2-րդ մասով, 158–րդ հոդվածի 1–ին, 4-րդ, և 10-րդ մասերով, 219.1-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 23.08.2013 թվականի թիվ 4180-Ա որոշմամբ (փոփոխ. 01.08.2017 թվականի թիվ 2645-Ա)՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Ման-Մար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Մերյոժայի Մանուկյանին Օրենսգրքի 158–րդ հոդվածի 1–ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության (վարչական) և դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ